

ԱՌՐԲԷՉԱՆԻ ՆԱԿԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ԱԿԱՆ ՄԻԱՅՈՒԹՅՈՒՆ („ԱԶՆԵՑԹ“)

338.4

Ա - 25

## Ա Ջ Ն Ա Ֆ Թ Ի

1928—29 թ. ԱԺԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

=====

1929—30 թ. ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

\_\_\_\_\_

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԶՆԱՑԹԻ

ԲԱԳՈՒ — 1929.

ԱՂԻԲԵՋԱՆԻ ՆԱԿԹԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՑՈՒԹՅՈՒՆ („ԱԶՆԵՑԹ“)

338-4

Ա-25

Ա

**Ա Զ Ն Ա Ֆ Թ Ի**

1928—29 թ. ԱԶԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

338

1929—30 թ. ՇԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

14040-17

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱԶՆԱՅԹԻ

ԲԱԳՈՒ—1929.

## ՀԱՌԱՋԱԲԱՆ

Ձնայած անցյալ տարվա մի շարք դժվարություններին, մենք հնգամյակի առաջին տարում մեր տնտեսության աճման բնագավառում խոշոր հուսալարի մություն ունենք:

Հնգամյակի վերջացած առաջին տարին հաստատեց կուսակցության գծի անպայման ճիշտ լինելը՝ յերկրի ինդուստրիացման թափի ուժեղացման և ժողովրդական տնտեսության վերակառուցման գործում:

Անընդհատ շարժվա անցնելը, սոցիալիստական մրցման ընդլայնումը, արտադրության մեջ մի անձնյա վարչաձև մտցնելը, աշխատանքային ղեկավարության ամբաղնդումը հանդիսանում են նախադրյալները նրա, վոր հնգամյա պլանը կիրադործվի ավելի կարճ ժամանակում, վոր կապիտալիստական յերկրներին հասնել ու անցնելու խնդրը մենք կիրականացնենք՝ ընդդեմ աջ ոպպորտյունիստների բանակի բուր թերահավատների հավաստիացումների. ինդուստրիալիզացիայի արագ թափը ապահովելու խնդրի համապատասխան, Ազնաթթի հնգամյակի յերկրորդ տարվա — 1929/30 թ. կոնտրոլային թվերը գերադանցում են այն թվերից, վորը նախատեսված էին հնգամյա պլանով:

Այդ պլանի իրականացումը պահանջում է բանավոր դասակարգի բոլոր ուժերի լարում:

Напечатано в гостипограф.  
„Красный Восток“  
БАКПОЛИГРАФА, БСНХ  
Баку, Карант. ул., д. № 84.  
Главлит № 6644.  
Заказ № 1776. Тираж 3000.

Ներկայումս անցկացնվող հավաքական պայմանագրերի կամպանիան պետք է ի մի համախմբի բանվորական մասսաները՝ մեր տնտեսական շինարարության և նրա հետ կապված դժվարությունների շուրջը:

Մեր արդյունաբերության առաջ դրված խոշորագույն խնդիրների իրականացումը հնարավոր է միայն բանվորական լայն մասսաներին արդյունաբերության ղեկավարության մեջ քաշելով՝ արտադրական խորհրդակցությունների միջոցով և սոցիալիստական մրցումը իր բարձրության վրա դնելով:

Բանվոր դասակարգի բոլոր ուժերի լարման մոմենտին՝ մեր տնտեսության սոցիալիստական պլանի իրագործման և տնտեսական դժվարությունների հաղթահարելիս չպիտի լինի վոչ մի բանվոր, վորը չհասկանար իր կատարած աշխատանքի և մեր յերկրի պրոլետարիատի դիկտատուրայի ընդհանուր շահի միջև յեղած կապը: Բանվորների հետաֆնաց խավերի պուկ տալու տրամադրությունը, լողրությունը, սիմուլյանտությունը, անփույթ վերաբերմունքին՝ դեպի արտադրական գործիքները, անթույլատրելի յերևույթներ են մեր պայմաններում, իսկ նրանք, ովքեր թույլ են տալիս այդ—սոցիալիստական արտադրության չարամիտ թշնամիներ են:

Այդ պակասությունների դեմ պայքարելը հանքերում ու գործարաններում ամեն մի գիտակից բանվորի և ամբողջ բանվորական կոլեկտիվի պարտականությունն է:

## ԱՁՆԱՑԹԻ 1928/29 Թ. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՅԵՎ 1929/30 Թ. ՇԵՌԱՆԿԱՐԸ:

Ազնաֆթի աշխատանքը 1928/29 թ. անցնում էր ծանր պայմաններում, վորովհետև խոշոր ծախսերի նախահաշիվը կրճատած էր, անբավարար էր սարքավորումների, նյութեղենների քանակը, պատահել են աշխատանքի ասպարեզում մի քանի անախորժ մոմենտներ, աշխատանքի դիսցիպլինայի խախտում և այլ:

Մինչդեռ՝ այդ տարվա ծրագրերը նշանավոր էր. պետք էր ծրագրով արտահանել 8.522 հազար տոնն նաֆթ, 311.289 մետր փորել և 300 միլ. փ. նաֆթ գտել Բագվի գործարաններում, 20 միլ. փ. գտել Բաթումի գործարաններում:

Այդ ծրագրերը պետք էր կատարել անպայման, վորովհետև 1928/29 թ., առաջին տարին էր 5 ամյա ծրագրով, և չկատարելը—կնշանակեր ընդհատել նաֆթային արդյունաբերության զարգացումը, վորը անպիշ նշանակություն ունի յերկրի տնտեսության վերաբերմամբ:

Բագվի նաֆթային աշխատավորները սովոր չեն անհաջողությունների, և ինչպես միշտ, ծրագրերը կատարված էր հիմնովին. ծրագրի համեմատ, կատարված է ավելի, քան պատվիրած էր: Ստացված է 8.663 հազար տ. նաֆթ, կամ ծրագրի 101%, փորված է 321.354 մետր, կամ ծրագրի 103,2%, և գտված է Բագվի գործարաններում 6.406 հազ. տ., կամ ծրագրի 102,9%. միայն Բաթումի գործարանները չեն կատար-

րել ծրագիրը և զտել են միայն 11,5 միլ. փ.—ծրագրի 57,5%: Ծրագրից հետո մնալու պատճառը բացատրվում է գործարանների ուշ շահագործումով:

5-ամյակի առաջին տարվա հետեանքները ամբողջ խորհրդային Միության ցույց տվին և հաստատեցին այնպիսի աճում մեր տնտեսության, վորը անհամեմատ ծրագրից բարձր էր և դա յեղավ լավագույն պատասխան նրանց, ովքեր չէին հավատում հնարավորություններին, ովքեր պնդում էին, որ 5-ամյակը—ֆանտազիա է:

Նաֆթային արտադրության, ինչպես նաև մյուս արդյունաբերություններին, ավելացրին 5-ամյա ծրագրին լրացուցիչ պատվերներ, և մասնավորապես Ադնաֆին պատվիրած էր ծրագրից ավել 20 միլ. փ. նաֆթ ստանալ և այդքան էլ ավելացրած էր զտելու համար: Այդ լրացումն տրվեց վոչ սկզբից, այլ վորոշ ժամանակ անցնելուց հետո: Դրա հետեանքով էլ լայնացրած ծրագիրը մնաց չկատարված 1,9%, նաֆթագտման գործում—4,5%:

Նաֆթի արտադրության աճումը 1928/29 թ. համեմատած 1927/28 թ. հետ—17,7%, վորման աճումը—22,6% և զտման աճումն—21,4%:

Այս թվերը ավելի բարձր են, քան նախատեսված էր 5—ամյա ծրագրով:

Նաֆթի արտահանության վերաբերմամբ պետք է ասել, վոր նրա աճման վրա 1928/29 թ. զղալի կերպով ազդեցին շատրվանները, վորոնք 1927/28 թ. հետ համեմատած 33 միլ. փ. նաֆթ են տվել: Անցած տարվա ընթացքում շարունակվում էր խորաքարշ հասոսների տված նաֆթը աճել, ավելի բարձրացել էր

կոմպրեսորների տված նաֆթի նշանակությունը և չափազանց պակասել էր շահագործումը ժելոնկայով, վորով ստացվել էր միայն 6,9% ամբողջ նաֆթի գումարից:

Բայց վոչ բոլոր շրջանները միատեսակ վերաբերմունք ցույց տվին—Բալախանին, Սուբախանին և Բիրի-Հելբաթը տվին նաֆթ ավելի, քան 1827/28 թ. եին ավել. ընդհանրապես—Ռամանին, Սարունչին, Բինաղաղին պակասեցրին նաֆթի արտադրությունը:

Առանձնապես հարկավոր է մատնանշել հին Բալախանու ուժասպառ շրջանը, վորը այժմ նորից կենդանացել է, շնորհիվ հաջող մշակման նաֆթով հարուստ Կիոմակա շերտին: Նոր բացված V շերտը Սուբախանում, պետք է լենթադրել, վոր կնպաստե բարձր պահելուն այդ շրջանի նավթի արտադրությունը: Առաջվա պես շարունակվում է նաֆթի աճումը Իլիչի անվան բուխտում, վորտեղ այդ աճումը կշարունակվի ապագայում, վորովհետև այնտեղ շահագործման լենթակա են միայն վերին շերտերը:

Շատ էլ միտթարական չեն առայժմ հետախուզական աշխատանքների հետեանքները. շատ թե քիչ արդյունաբերական նշանակություն ունեցող շրջանների մասին, կարելի է խոսել միայն Պուտայի, Սորոսանու, Կառա-Չուխուրի մասին, բոլոր մնացած հետախուզումները, առայժմ արդյունաբերական նշանակություն ունեցող նաֆթ չեն բացել:

Մինչդեռ—պարզ է վոր նաֆթի արտադրության աճումը նախատեսված ծրագրով չի կարող ծածկվել նաֆթով, վորը կարելի է ստանալ նաֆթային շրջաններից և հետեաբար՝ նաֆթի նոր ծննդավայրեր զբո-

նելը անխուսափելի անհրաժեշտութիւնն է: Այդ բոլորը պահանջում է ավելի ուշադրութիւն դարձնել հետախուզման գործին և նշանակած գումարներին՝ այդ նպատակով ավելացնել: Կատարելով անցած տարվա նաֆթի արտադրութեան պատվերը, Ազնաֆթը շատ լարված կերպով հասցրեց ինքնարժեքը—մի տոնն նաֆթը 3 ուլր. 75 կ., իջեցնելով 1927/28 թ. հետ համեմատած—16,3%:

Բոլոր պատվերները, վորոնք տրվում են Ազնաֆթին, տարուց-տարի պահանջում են ավելի մեծ քանակութեամբ փորել, վորի աճումը համեմատաբար ավելի բարձր է, քան նաֆթի արտադրութեան աճումը: Այդպես եր գրութիւնը 1928/29 թ. նաֆթի քանակութեան վերաբերմամբ ավելի բարձր եր 1927/28 թ. արտադրութիւնը—17,7%, փորումն տվեց համապատասխան 22,6%: Հորափորման ծրագիրը 1928/29 թ. կատարված է 3,2% ծրագրից ավելի, բայց չեթե խնդիրն մոտենանք փորելու նպատակի տեսակետով—կատարումն միատեսակ չէ, վորը յերեւում է հետևյալ աղյուսակից:

Աղյուսակ № 1.

| Փորելու նպատակը       | Ծրագրով | Փաստորեն | Կատարվածը<br>% % |
|-----------------------|---------|----------|------------------|
| Շահագործական փոր. . . | 257.785 | 254.497  | 98,7             |
| Հետախուզակ. հին շրջան | 36.819  | 50.406   | 136,9            |
| » նոր »               | 16.685  | 16.450   | 98,6             |
| Ընդամենը . .          | 311.289 | 321.354  | 103,2            |

Շահագործական հորափորումն կատարված չէ միայն 1,37%, կատարված չէ նաև հետախուզական հորափորումն նոր շրջաններում 1,4%: Բայց հին շրջաններում զգալի կերպով ավել է կատարված ծրագրից—38,9%: Նոր շրջաններում ծրագրի պատվերը չկատարելը, միանգամայն անցանկանալի յերևոյթ է, մանավանդ, յեթե հաշվի առնել, վոր ինքը ծրագիրը նոր հետախուզումների առհասարակ բավարար չէ և հաշվի չէր առած այն խոշոր դերը, վորը տրվում եր նոր նաֆթի ծննդավայրեր գտնելուն 5-ամյա ծրագրով: Հետախուզման դերը նոր շրջաններում հետևյալ տարիներում կտրուկ կերպով բարձրացնվում է, վորը թելադրում է նոր շրջաններ գտնելու և շահագործելու անհրաժեշտութիւնը, ահա թե ինչու պետք է վերացնել այն բոլոր պատճառները, վորոնք արդելք են հանդիսանում հորափորման հետախուզումներին: Ուստի առաջին հերթին հարկավոր է ուժեղացնել ինչպես ֆինանսական հայթայթումը, նաև փոխադրական միջոցների, պիտույքների և գործիքների մատակարարումն:

Փորած մի մետրը անցած 1928/29 թ. 165 ուլր. եր հասցրած. դա այն թիվն է, վոր Տրեստն ինքն եր նշանակել: Գլավգորտոպի առաջարկած 155 ո. չհաջողվեց հասցնել: Առաջին տարվա հետ համեմատած ինքնարժեքը իջեցրած է 9%: Բացասական դեր խաղաց հորափորման իջեցնելում բացի ֆինանսների անբավարար լինելը, նաև վերին աստիճանի հին և մաշված գործիքները և պիտույքները, հին փորելու խողովակները, վորի հետևանքով տեղի ունեցան մի շարք ընդհատումներ և ընդմիջումներ:

Իբրև հաշուություն, պետք է մատնանշել անցյալ տարվա ընթացքում տուրքինային և պտույտաձև հորափորման սխտեմների մասնակցելը ավելի ուժեղ կերպով, քան 1927/28 թ., հակառակ դրան՝ պետք է շեշտել կանատային ու շտանգային սխտեմով փորելու կրճատումը: Հորափորման արագությունը (պտույտաձև շահագործական) անցած տարի յեղել է 91,4 մետր մի ստանոկ—ամսվա համար. իսկ 1927/28 թ.— 84,9 մետր, չնայած նրան, վոր անցյալ տարի բուրգերի միջին խորությունը ավելի էր, քան առաջի տարին:

Պետք է ասել, վոր 1927/28 թ. գործարանային շինարարության ուժեղացրած տարի էր:

Առաջին գործարանը, վորը գործի գցվեց—գա կոեկինգ-Վիկկեռս-ն էր. կոեկինգը այժմ նորմալ կերպով է աշխատում. զտում է որեկան 250 տ. Սուրախանու պարաֆինոտ մազութ և սալիս է միջին թըվով 25% բենզին. սկզբում տեղի ունեցան ընդհատումներ և մի շարք փոփոխություններ գործարանի աշխատանքի մեջ:

Ապա գործի են գցվում յերկու բատարեյաներ, ամեն մեկը 9 կուբից բաղկացած, վորոնցից ամեն մեկը զտում է 325 տ. (մեկը «Հոկտ. Հեղափ.» անվան գործարաններում, մյուսը—Պյատակովի անվան գործարանում № 3):

Թեև կուբային բատարեյան նաֆթաղտման հին տեսակն է, բայց Ազնաֆթի 2 բատարեյաները ունին վերջին կատարելագործված կահավորումներ, (կոլոն-նաներ, յեվապոռատոններ) և աշխատանքի մեջ բավականին խնայողություն են տալիս:

Ամենավերջին ժամանակը գործի գցվեցին 3 նոր գործարաններ խողովակային սխտեմի—Պինչ-ի Վիլկե-ի սխտեմի—190 հազար տ. արտադրությամբ և Գրեվեռ-ի սխտեմի—410 հ. տ. արտադրությամբ: Գործի է գցված նաև թթվատի գործարանը, Լուրգ-ի սխտեմի, վորի արտադրությունը տարվա ընթացքում հավասար է 8.000 տ.: Հայտնի է, վոր միշտ Ազնաֆթի համար դեֆիցիտ է յեղել ծծմբաթթուն, և առանձնապես այդ խնդիրը սուր կերպարանք է ստացել Բաթումի գործարանները գործի գցելուց հետո: Ծծմբաթթվի կարիքը չեն ծածկում Լուրգ-ի գործարանի արտադրությունով, և հետևաբար առաջին հերթին պետք է դնել նոր ծծմբաթթվի գործարանի շինարարությունը:

Վերոհիշյալ գործարանների շահագործումը զգալի կերպով բարձրացրին Բագվա գործարանների արտադրական ընդունակությունը, և դրա շնորհիվ հաջողվեց իրագործել այն ահագին ծրագիրը, վորը հանձնում են գործարաններին:

1928—29 թ. ծրագրով նախատեսված են Բագվա գործարաններում զտել 5.815 հ. տ. նավթ, բենզին զտել 409,5 տ., ընդամենը—6.224,5 տ. ամբողջ տարվա ընթացքում զտված էր 5.754,5 տ. և զտված էր բենզին—6.51,3 հ. տ.,—ծրագրի 102%.

Նաֆթաթորման վերաբերյալ էլ Ազնաֆթին ներկայացված էր լրացուցիչ ծրագիրը—զտել 300 հ. տ., վորոնց ծանրությունը ընկավ ամբողջովին Բագվի գործարանների վրա: Այդ ծրագիրը նույնպես առաջարկվեց Ազնաֆթին հիմնավոր ծրագիրն ընդունելուց հետո, յերբ գործարանները արդեն հարմարեցրած էին դրան:

Ընդհանուր նավթագտման պատկերը հետևյալն է.

|                                                 |              |
|-------------------------------------------------|--------------|
| Հիմնովին ծրագրով պետք երգտել Բագու—             | 6224,5 հ. տ. |
| Լրացրած       "       "       "       "       — | 300 " "      |
| Բաժում—                                         | 327,6 " "    |
| Ընդամենը—                                       | 6.852,1 " "  |

Զտված է 6.595 հ. տ. կամ 96,3% լայնացրած ծրագրի:

Մասնավորապես Բաժումի գործարաններում յենթադրած 327 հ. տ. (20 միլ. փ.) գտելու գտած է ընդամենը 190 հ. տ. (11,6 միլ. փ.): Այդ բացատրվում է գործարանների ուշ գործի դեցելով, արտասահմանից կարևոր գործիքների և պիտույքների անժամանակ հասնելու պատճառով:

Զտած նավթի և բենզինից մաքրած նավթի քանակը ավելացել է 1927—28 թ. հետ համեմատած—21,4%. պետք է ասել, վոր զգալի կերպով շատացել է ծանր նավթի գտումը, վորը ցույց են տալիս նավթաթորման գործի մեջ տեղի ունեցող առաջագիմուծյունները:

Պատրաստ մթերքների արտադրությունը անցել է հիմնովին ծրագրից և անհամեմատ ավել է 1927/28 թվին արտադրությունից: Առանձնապես հարկավոր է մատնանշել ավելացած բենզինի գտումին—1927/28 թվի հետ համեմատ—25,5%, կերոսինի—17,6%, յուղերի—6,7%, հատուկ յուղերի—66,6%.

## ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ներկա 1929—30 թ. Ազնաֆթին առաջարկած է ավելի մեծ պահանջներ, վորոնք բարձր են, քան նախատեսված է 5-ամյա ծրագրի թվերով: Յենթադրվում է այս տարի արտահանել 600 միլ. փ. նավթ, փորել 390.411 մետր և գտել 500 միլ. փ.:

Ազնաֆթը հաշվում է այս պատվերը չափից դուրս մեծ, բայց ցանկանալով մոտենալ ալդ թվերին, նշանակել և նավթի համար—592,5 փ., հորավորման գումարը—ամբողջությամբ, իսկ նաֆթագտման համար—Բագվի գործարաններում 425,5 փ., Բաժումի գործարաններում 50,5 փ. գտել:

Ինչ է պահանջվում այդ մեծ ծրագիրը կատարելու համար:

Ի հարկե, պիտույքների անբավարար մատակարարումը, հարկավորաչափ կահավորումների բացակայությունը, կրճատած ոժանդակները խոշոր շինարարություն համար, ծանր կերպով կազդեն Ազնաֆթի աշխատանքի վրա այս տարի: Բայց հաստատ կերպով կարելի է ասել, վոր գործը հանդուրժյուն չի ունենա և ծրագիրը չի կատարվի, յեթե ամեն մի հանքագործ չզգա, վոր նա ամեն ուժով պետք է իր աշխատանքով աջակցի ծրագրի ամբողջ պատվերը կատարելուն: Այդ հանգամանքը բոլոր հանքագործները պետք է աչքի առաջ ունենան, վոր չկատարելը տրված պատվերի՝ նաֆթային արդյունաբերությունից վերաբերյալ՝ կնշանակե իջեցնել սոցիալիստական շինարարություն թափը

—ամբողջութեամբ: Մեր արդունաբերութիւնը մատակարարում է վոչ միայն ներքին շուկային, այլ և արտաքին շուկային: Մենք պարտավոր ենք ապահովեցնել վոչ միայն մեր արտադրութիւնը—ֆաբրիկաները, գործարանները և տրանսպորտը և մեր գյուղի տընտեսութիւնը վառելիքով, այլ և մենք պետք է տանք այն վալյուտան, վորը կապահովեցնի յերկրին նոր գործարաններ շինարարութիւն, ելեքտրական կայաններ և այլն:

1929—30 թ. Ազնավթի առաջ դրված են ահագին դժվարութիւններ: Յերբեք չպետք է մոռանալ այդ: Պարզ է, վոր միայն ռադիոնալիզացիայի լինութեամբ արդունաբերութեան բոլոր պրոգրեսները և ապա լայն տարած սոցիալիստական մրցումը բանվորների և վարչական պերսոնալի մեջ, թույլ կտա իրագործել լիովին 1929—30 թ. ծրագիրը:

Մոտ ութերես սկսվում է պայմանագրի կամպանիան: Մի կողմից դա կլինի վորոշ ցույց տրեստի հաշտութիւնների և այն պակասութիւնների, վորոնք պետք է վերացնել:

Այդ կլինի այն ժամանակ, յերբ պայմանագիրը կդառնա և տնտեսավարների և բանվորների համար անպայման իրադրոճելու ախտ: Մյուս կողմից պետք է հիշել, վոր պայմանագիրը պետք է պատասխանի և հոգա գլխավոր հարցին—բանվորական մասնային ամբողջութեամբ—աշխատավարձի և բանվորական կյանքի մակերեւոյթի մասին: Բացի այդ պայմանաշերտը պետք է ձգտի լավացնել բանվորների կենցաղը ու բարձրացնել կուլտուրական մակերեւոյթը:

Նաֆթարդյունաբերութեան առանձնապես, իսկ Ադրբեյջանի Նավթային Տրեստը մասնավորապես, շահավետ գործ և ոգուտ է տալիս կառավարութեան, այդ պատճառով ել աշխատավարձը և բանվորական կենցաղը լավացնելու հարցերը համեմատաբար հեշտ են վորոշվում: Պետք է ասել, վոր աշխատավարձը հանքարդյունաբերութեան մեջ բարձր է՝ մասնավորապես Ադնաֆթում, ծանր քան ինդուստրիայի շատ ուրիշ ճյուղերում:

Վոր չափ կարելի է ավելացնել աշխատավարձը: Ի հարկե, նախ և առաջ այդ ավելացումը չի կարող սահմանափակվել միայն նավթարդյունաբերութեան շրջանակով, անպատճառ այդ պետք է կապել պետութեան ամբողջ արտադրութեան շահերի հետ, և յերկրորդ—նշանակած հետագա աշխատավարձի ավելացումը չպետք է բարձրացնե արտադրութեան մթերքների ինքնարժեքը:

Միայն բարձրացրած աշխատանքի արտադրութեան վրա և աշխատանքի վորակի վրա հիմնված կարելի է ավելացնել աշխատավարձը:

## ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Կենտրոնը նշանակել է Ազնաֆթի համար— 1.500.000 ռ.: Պետք է լենթարկել անալիզի աշխատավարձը Ազնաֆթում 1928—29 թվի և նրա դրուժյունը՝ պայմանագիրը կնքելու մոմենտին, վորպեսզի այդ նշանակած գումարի բաժանումը կանոնավոր կատարել:

Աշխատավարձի աճումը 1928 թ. տեղի ունեցավ շնորհիվ աշխատավարձի բեֆորմի:

Ինչպես հայտնի է, այդ բեֆորմի հիմքում դրված էին հետևյալ սկզբունքները.— առաջինը, բարձրացնել տարիֆային ուճկաչափեր (ставка) ընդհանուր աշխատավարձի վերաբերմամբ, լերկրորդը— 17 կարգանոց ցանցը փոխարինել չորս զանազան տարիֆային ցանցերով և լերկրորդը— հերթապահերի ինստիտուտը մոցնելը:

Այդ բեֆորման 1928 թ. հաջողվեց վերջնականապես անցկացնել և միայն 1929 թվին հավաքական պայմանագրի կամպանիայի ժամանակ կարելի յեղավ բեֆորմը վերջացրած համարել:

Գործող 1928 թ. տարիֆային ցանցում մոցնում են հետևյալ փոփոխությունները.— բանվորական ցանցում, վորը ուներ 8 կարգ, առաջին կարգի ուճկաչափը բարձրացրած է 1 ռ. 50 կ. մինչև 1 ռ. 70 կ.— 12%: Դրա հետ միասին, առաջին կարգի փոխադարձ հարաբերությունը դեպի վերջին 8 կարգը իջեցրած են 2,8 մինչև 2,6: Շնորհիվ դրան, վորակցալ բան-

վորները ուճկաչափերը համեմատաբար վորոշ հափով իջան:

Աշակերտների և վարչական-տեխնիկական պերսոնալի ցանցերում պակասեցրած չեն կարգերի թիվը և վոչ ել բաժինների հարաբերմունքը: Աշակերտների ցանցի առաջին կարգը ավելացրած է 11,2%, 85 կ. մինչև 95 կ., ունենալով բաժինների փոխադարձ հարաբերությունը 6 կարգի դեպի 1 կարգը— ինչպես 2,5 : 1:

Վարչական-տեխնիկական պերսոնալի 1 կարգի ուճկաչափը բարձրացրած է 113 ռ. մինչև 119 ռ.— 5,4%, բաժինների փոխադարձ հարաբերությունը 16 կարգի դեպի 1 կարգը, ինչպես 4 : 1:

Փոխանակ 12 կարգանոց ցանցի, վորը գոյություն ուներ 1928 թ., բոլոր ծառայողների համար 1929 թվին, վարչական ապարատների ծառայողների մի մասը փոխադրվեց պաշտոնական ուճկի թե նորմալացրած, թե վոչ նորմալացրած որով: Այն ծառայողների համար, վորոնք անմիջապես աշխատում են յողների համար, վորոնք անմիջապես աշխատում են արտադրության մեջ (այդպիսիների տոկոսն է 62,1) կազմած եր 5 կարգանոց ցանց, վորի 1 կարգը 2 ռ. 30 կ., բաժինների փոխադարձ հարաբ. 5 կարգի դեպի 1 կարգը— 1,75 : 1:

1929 թ. բոլոր փոփոխությունները տվին հետևյալ թվերը: Ազնաֆթի աշխատողների աշխատավարձի մեջ:

828  
45-03061



Միջին ամսեկան աշխատավարձ.

Աղյուսակ № 2

| Աշխատանքի կատե-<br>գորիա              | 1928 թվի<br>9 ամիս<br>(հունվար-<br>սեպտեմբ.) | 1929 թ. 9 ամիս |         |
|---------------------------------------|----------------------------------------------|----------------|---------|
|                                       |                                              | Հունվ.—Սեպտ.   | Ռուբ. % |
| Բանվոր . . . . .                      | 79—23                                        | 86—88          | + 9,7   |
| Ցածր ծառայողն. . .                    | 47—96                                        | 50—29          | + 4,9   |
| Ընդամենը բանվորա-<br>կան ցանցով . . . | 76—42                                        | 83—70          | + 9,5   |
| Աշակերտները . . .                     | 51—09                                        | 60—13          | + 17,7  |
| Ծառայողները . . .                     | 96—38                                        | 102—08         | + 5,9   |
| Վարչական տեխնիկ.<br>պետոն. . . . .    | 185—52                                       | 196—48         | + 5,9   |
| Ընդամենը աշխ. . .                     | 83—75                                        | 91—47          | + 9,2   |

Բոլոր բանվորների աշխատավարձի մակերևույթը բարձրացել է 10%, աշակերտների—17%, վարչական-տեխնիքական պետոն.—5,9%, իսկ ցածր ծառայողներինը ընդամենը—4,9%:

Աշխատավարձը հավասարաչափ չբարձրանալու պատճառով, անձինք, վորոնք անցնում են զանազան ցանցերով, նրանց աշխատավարձի փոխադ. վերաբերմունքն էլ փոխվել է ցանցերում: 1928 թ. ծառայող-ները ամսական միջին աշխատավարձը ավելի բարձր էր, քան նրանց, ովքեր անցնում էին բանվորական ցանցով 26,1%, վարչական-տեխնիքական պետոն.—

142,8%: այդ տարբերությունը համապատասխան կերպով իջնում է մինչև 21,5% ծառայողների ցանցով և մինչև 138,8% վարչական-տեխնիքական պետոն. ցանցով—սեղի է ունեցել հարաբերական ծառայողների աշխատավարձի իջեցում յեվ բանվորների աշխատավարձի բարձրացումն:

Աշակերտների ցանցի բաժնում. փոխադ. հարաբ. չեր փոխվել, և դրա պատճառով էլ նրանց աշխատավարձը համեմատաբար բարձրացել էր. բանվորական ցանցի 1 կարգի և աշակերտների ցանցի 1 կարգի ավելացումը համարյա միատեսակ էր: Շնորհիվ այդ հանգամանքի 2 ցանցերի աշխատավարձը մոտեցան իրար: Տարբերությունը այդ նույն ցանցերի մեջ 1928 թվին կազմում էր 55,1%, իսկ 1929 թ. տարբերու-թյունը իջել էր մինչև 45,1%:

Բանվորների և աշակերտների ցանցերը հիմնված են որական աշխատավարձի վրա և այդ պատճառով էլ, նրանց համար, ովքեր անցնում են այդ ցանցե-րով, մեծ դեր է խաղում նրանց որական աշխատա-վարձը:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այդ աշխատա-վարձի աճումը 1928 և 1929 թ.թ.

Աղյուսակ № 3

|                      | 1928 թ.<br>9 ամիս | 1929 թ. 9 ամիս |                             |
|----------------------|-------------------|----------------|-----------------------------|
|                      |                   | ա. կ.          | Համեմատ<br>1928 թ.<br>հետ % |
| Բանվորներ . . . . .  | 3—30              | 3—62           | + 9,7                       |
| Ցացր ծառայողն. . .   | 1—94              | 2—05           | + 5,7                       |
| Բանվորական ցանցով    | 8—17              | 3—49           | + 10,1                      |
| Աշակերտներ . . . . . | 3—25              | 2—61           | + 16,5                      |



Բանկերի միջին ամսեկան աշխատավարձը. (հաշվի են առնված  
և աշակերտները)

Ս. Գրուսյակ № 5

| Արդյունաբերական<br>ճյուղեր             | 1927/28<br>թ.<br>ուրբ. | Աշխատավ.<br>% % Աղ-<br>նաֆթում<br>համեմատ<br>համապատ.<br>ճյուղ. հետ | 1928/29<br>թվի II<br>խում-<br>յակը | Աշխատավ.<br>% % Աղ-<br>նաֆթում<br>համեմատ<br>համապատ.<br>ճյուղ. հետ | Աշխատ.<br>աճման<br>թափը<br>II<br>խում-<br>յակում |
|----------------------------------------|------------------------|---------------------------------------------------------------------|------------------------------------|---------------------------------------------------------------------|--------------------------------------------------|
|                                        |                        |                                                                     |                                    |                                                                     |                                                  |
| Խ. Ս. Հ. Մ. ամբողջ<br>արդյունաբեր. . . | 64—46                  | 119,9                                                               | 67—87                              | 121,5                                                               | 5,3                                              |
| Այդ թվում                              |                        |                                                                     |                                    |                                                                     |                                                  |
| Քարե-ածուխային .                       | 56—84                  | 135,9                                                               | 60—12                              | 137,2                                                               | 5,6                                              |
| Նավթային . . . .                       | 74—06                  | 104,3                                                               | 76—48                              | 107,8                                                               | 3,1                                              |
| Ագնաֆթ . . . . .                       | 77—27                  | —                                                                   | 82—47                              | —                                                                   | 6,7                                              |

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս միջին տրական աշխատավարձի  
դինամիկան:

Ս. Գրուսյակ № 6

| Արտադրության<br>ճյուղեր                  | 1927/28 թ. |                                                  | II խում. 1928/29 թ. |                                                  | Աշխատ.<br>աճման<br>թափը<br>II խում-<br>յակում |
|------------------------------------------|------------|--------------------------------------------------|---------------------|--------------------------------------------------|-----------------------------------------------|
|                                          | Ուրբ.      | Աշխատ. % %<br>համապատ.<br>ճյուղերի<br>հետ համեմ. | Ուրբ.               | Աշխատ. % %<br>համապատ.<br>ճյուղերի<br>հետ համեմ. |                                               |
| Խ. Ս. Հ. Մ. բոլոր ար-<br>տադրությունները | 2—77       | 114,1                                            | 3—02                | 117,2                                            | 8,9                                           |
| Դրանց թվում                              |            |                                                  |                     |                                                  |                                               |
| Քարե-ածուխային .                         | 2—53       | 124,9                                            | 2—69                | 131,6                                            | 6,3                                           |
| Նավթային . . . .                         | 3—10       | 102,0                                            | 3—36                | 105,4                                            | 8,2                                           |
| Ագնաֆթ . . . . .                         | 3—16       | —                                                | 3—54                | —                                                | 12,0                                          |

Աղնաֆթի բանվորների միջին ամսեկան աշխատավարձը շատ բարձր էր բոլոր արտադրութչունների բանվորների աշխատավարձից 19,9%, քարե-ածուխային բանվորների աշխատավարձից—35,9% և բոլոր նաֆթային բանվորների աշխատավարձից—4,3%:

Աշխատավարձի աճման թափը 1928/29 թվի II չեռամյակում համեմատած 1927/28 թ. հետ Աղնաֆթում բարձր է, քան բոլոր ֆնացած վերահիշյալ ճյուղերում: Այդ պատճառով էլ II չեռամյակի աշխատավարձի տարբերութչունը քիչ բարձր է. ուրիշ խոսքով—Աղնեվթում աշխատողների աշխատավարձը համեմատաբար բարձր է: (Տես աղյուսյակ № 6):

Աղնաֆթի բանվորի որական աշխատավարձը II չեռամյակում բարձր է, քան բոլոր արդյունաբերութչունների բանվորների աշխատավարձը—17,2%, քարե ածուխային—31,6%: Աշխատանքի աճման թափը Աղնաֆթում ավելի բարձր է, քան արդյունաբերութչյան բոլոր ճյուղերում: Վերում առաջ են բերված Աղնեվթի աշխատողների աշխատավարձի անցած տարվա դրութչունը: Աշխատավարձի թափի աճումը ճիշտ կանոնավորելու համար 1930 թ. պայմանագրի հիմքում պետք է դնել հետևյալ սկզբունքները. 1. Բանվորական հիմնական խմբերի աշխատավարձը տարիֆիկացիայի չենթարկել նոր տեղեկատուներով, վորոնք մշակված են հանքագործների միութչյան Կ. Կ. և Գլավգորտոսով. 2. Շարունակել հավասարեցնել մի վորակի բանվորների և կտորով աշխատող ոռճկաչափով վարձատրվող բանվորների աշխատավարձը, մշտական տեխնիքական նորմաներ մշակելով: 3. Բարձրացնել ամենաքիչ ստացող բանվորական խմբերի ոռճկաչա-

փը, ոգտվելով մեխանիքական միջոցով աշխատավարձը բարձրացնելու ֆոնդից, վորով կվերջանա տարիֆային բեֆորման: Աղնաֆթի բանվորների մեծ մասը, —80%—աշխատում է ամսավճարով (повременно), կտորով աշխատում է միայն 20%:

Այդ պատճառով բանվորական ցանցի աշխատավարձը կանոնավորելու ժամանակ, զլխավոր դեր պետք է խաղա—ինչպես հիմնական ոռճկաչափի մեխանիքական բարձրացումը, նուչնպես նոր տեղեկատուչով տարիֆիկացիայի չենթարկելը: Դրա հետ միասին, պետք է աչքի առաջ ունենալ աշխատավարձի այն բնական աճումը, վորը տեղի է ունենում տարվա ընթացքում, վոր կապ ունի աշխատանքի արտադրութչյան ավելացման հետ և մասնավորապես, բանվորների վորակի բարձրացնելու և կարգից կարգ վորոնների վորակի բարձրացնելու: Աղնաֆթի ծանր ֆինանսական զրութչունը աչքի առաջ ունենալով, վորի մասին հիշված էր վերևում, չենթադրվում է 1930 թ. աշխատավարձը բարձրացնել 7,2%:

Բանվորական ցանցի աշխատավարձը բարձրացնելու ժամանակ՝ անհրաժեշտ է բարձրացնել նուչնպես աշակերտների ցանցի աշխատավարձը: Աղնաֆթի վարչական-տեխնիքական պերսոնալի աշխատավարձը զգալի կերպով ցածր է, քան ուրիշ միատեսակ տրեստներում և ուրիշ արտադրական ճյուղերում: Այդ պատճառով էլ անհրաժեշտ մասնագետներ մեր արտադրութչյան մեջ ունենալու համար, հարկավոր է բարձրացնել նրանց աշխատավարձը այն չափով, վորը գոյութչուն ունի Գրոգնեվթում:

Ինչ վերաբերվում է ծառայողներին՝ նրանք վերջին տարիները ստացան ամենաքիչ ավելացումը:— Դրա համար Ազնաֆթը յենթադրում է ծառայողների ցանցում մասնակի բարձրացում կատարել 1 կարգում և վերաքննել վարչական ապարատների ծառայողների ուձկաչափերը:

Ահա այն փոփոխությունները, վորոնք ինկատի են առնված 1930 թ. հավաքական պայմանագրի մեջ մտցնելու համար, աչքի առաջ ունենալով այն սուղ ֆինանսական միջոցները, վորոնք Ազնաֆթը ունի իր տրամադրություն տակ:



ՀՀ Ազգային գրադարան



NL0193884

31. 054